Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Պառավաքարի Էդիկ Մելքումյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), տեխնոլոգիայի աղջիկների խումբ (4 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), կենսաբանության (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.- դիմում (Ձև 1), 1 մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
2.- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) ,
3.- անձը հաստատող փաստաթուղթ,
4.- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5.- ինքնակենսագրություն(Ձև 5)
6.-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությանում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7.- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8.- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9.- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ դեկտեմբերի 7-ից դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթները տեղի կունենա **2022 թ. դեկտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին և ժամը 14:00-ին,** ՀՀ Տավուշի մարզի Պառավաքարի Էդիկ Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցում. Հասցեն՝ գ. Պառավաքար, 4-րդ փողոց, շենք 9:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (094-05-33-40) հեռախոսահամարով: